

«եղիցին աշխարհք քրիստոնէից, որպես գորախտն և բնաջինջ լինի ազգն նետողաց յերեսաց յերկրէ յարիական ազգէն հռոմայեցոց: Խաղաղանա երկիր ի բարի գնացս, կանգնին հաւատացեալք և վկայարանք սրբոցն, անկցի աշխարհ անօրինաց ընդ լծով ծառայութեան հայոց»<sup>1</sup>:

Հատված Սուրբ Ներսեսի տեսիլքից

## 1917 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ\*

**Քանալի բառեր** – ուրվական, տեսիլք, ջրբաժան, բյու-  
զանդական քաղաքականություն, Ներսես Մեծ, հայկական  
մեսիանիզմ, խաչապաշտ թագավորներ, նոր խաչակիրներ,  
Ռուսաստան, հեղափոխություն, Արցախյան հիմնահարց:

Երբ 2017 թվականին Եվրոպայում արձանագրվում է ավանդական-քրիստո-  
նական արժեքների վերածնունդն ու այդ ուժերի հաղթարշավը, Ռուսաստանում  
պատրաստվում են նշել նույն արժեքներից 1917 թվականին կատարված արմա-  
տական շրջադարձի՝ Հոկտեմբերյան հեղաշրջման 100-ամյակը:

Պատրաստվում են, սակայն այդ պատմական իրադարձությունից մեկ դար  
անց էլ շարունակում են վիձել Ռուսաստանի ու նախկին ԽՍՀՄ-ի ժողովուրդ-  
ների ճակատագրում «1917 թվականի» ունեցած քաղաքական դերակատարու-  
թյան շուրջ: Իսկ դրան զուգահեռ ընթացող գիտական քննարկումներում ներ-  
գրավված Ռուսաստանի առաջատար պատմաբանները մինչ օրս չեն հստակեց-  
րել անգամ, թե ինչպես պետք է բնորոշել 1917-ի հոկտեմբերը՝ հեղափոխություն<sup>2</sup>,  
հեղաշրջում<sup>3</sup>, իսկ միգուցե աղետ: Ավելին, Ռուսաստանի նախագահի 2016 թվա-  
կանի դեկտեմբերի 19-ի կարգադրությամբ ստեղծված կազմկոմիտեում այնպիսի  
բռնուն բանավեճեր են ծավալվել, որ թվում է, թե այդ երկիրը հայտնվել է նոր  
1917 թվականի նախօրեին:

Քանի որ Ռուսաստանը՝ իբրև ցարական ու խորհրդային կայսրություն, 20-  
րդ դարի ընթացքում երկու անգամ (1917 և 1991 թթ.) հասցրել էր փլուզվել, 2005-  
ից սկսած՝ այս իրադարձությունը Ռուսաստանում նշվում էր որպես «ժողովրդա-  
կան միասնության օր»՝ նոյեմբերի 7-ից (հոկտեմբերի 25) առաջաձգելով նոյեմ-  
բերի 4-ը: Բայց քիչ անց՝ 2013 թ., Ուկրաինայում ձիշտ նոյեմբեր ամսին սկսված  
«գունավոր հեղափոխությունը» էլ ավելի մեծացրեց սեփական պատմության  
հանդեպ վախը:

Պատճառն ակնհայտ է. 1991 թվականին տեղի ունեցած ԽՍՀՄ փլուզումից

<sup>1</sup> Յաղագս զարմից սբ. Գրիգորի Հայոց Լուսավորչին և տեսիլ սրբոյն Ներսիսին, ձեռագիր ՄՄ, N 1912:  
\* Ընդունվել է տպագրության 15.03.2017:

Թ. (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (57), ԽՈՒՎԱՐ-ՆԱՐԿ, 2017  
ՎԿՆ ԽԱՆՈՒՄԻՆԱԿԱՆ ԽԱՆՈՒՄ

ավելի քան քառորդ դար է անցել, սակայն մինչ օրս Ռուսաստանը չի կատարել իր քաղաքակրթական ընտրությունը և դրա հիման վրա չի հստակեցրել հետագա զարգացման ուղին: Իսկ նրա քաղաքական վերնախավի համար սրտամոտ **Մեծ Ռուսաստանի** տեսականը **Մեծ ցնցումների** գաղափարին հակադրող ստոլիպինյան բանաձևի որդեգրումն ապահովել է սոսկ հզոր տերություն՝ **դերժավա** մնալու անխախտ համոզմունքի գերակայությունը: Բայց քանի որ դեռ պարզ չէ այդ տերության «ներքին բովանդակությունը», պատմական իրադարձության՝ 1917 թվականի գնահատման շուրջ Ռուսաստանում ծավալվող դիսկուրսը ձեռք է բերում ներքաղաքական պայքարի տեսք:

Եվրասիականության քաղաքական դոկտրինը նույնպես չի տալիս հարցի պատասխանը, որովհետև Ռուսաստանի հակաարևմտյան դիմադրողականության ամրապնդման համար քրիստոնեական ընդհանուր քաղաքակրթության հետ ունեցած **տարբերությունները** հակադրում է շատ ավելի հիմնարար **ընդհանրություններին**: Ուստի ռուս քաղաքական միտքը տարուբերվում է մի կողմից՝ Եվրասիականության շղարշի տակ մատուցվող նեոբոլշևիկյան պարզունակ կարգախոսների, իսկ մյուս կողմից՝ Նիկոլայ 2-րդ «ցար-մարտիրոսի» մասին հիշողությունը արևմտյան արժեքների հետ հաշտեցնելու անօգուտ փորձերի շրջագծում: Ու քանի որ 1917-ի գնահատման շուրջ ծավալվող բանավեճի առանցքում հայտնված Լենինի հուղարկավորման հարցն անգամ բուռն քննարկումների առիթ է դառնում, առաջ եկող խառնաշփոթը հաղթահարելու համար Ռուսաստանին նոր միացած Դրիմի դեկավարությունն առաջարկում է վերականգնել միապետությունը: Նման իրադրության մեջ երկրի իշխանություններն իրենք էլ չգիտեն՝ ինչպես վարվել գնալով ավելի ու ավելի առարկայական սպառնալիքի վերածվող 1917 թվականի **ուրվականի** հետ: Սա վկայում է այն մասին, որ Ռուսաստանը դեռևս չի հաղթահարել իր համար չափից ավելի երկարող 20-րդ դարը:

Ստեղծված պայմաններում բնական է ու օրինաչափ, որ 2017 թվականին սեփական պատմության հանդեպ վախի համախտանիշը համակել է նաև Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում կորուստներ ունեցած հետխորհրդային երկրներին, որոնցից յուրաքանչյուրը բոլշևիկների հանցագործությունների իր «ազգային թղթածրարն» ունի: Մեզ՝ հայերիս համար 1917 թվականը խորհրդանշում է Ռուսաստանյան կայսրության փլուզման հետևանքներից մեկը՝ մինչ օրս այդպես էլ չհաղթահարված Լենին-Աթաթուք գործարքը, որը 1915-ի հայրենագրկումի կեղծ-իրավական ամրագրման հոմանիշն է:

Ռուսաստանի հակաարևմտյան դիմաշրջումը 1917 թվականին ծանր հարված է հասցրել մեր ազգային իղձերի ու երազանքների իրականացման գործին: Բայց անգամ այդ մեծագույն աղետը չի կոտրել մեր ժողովրդի կամքը, և վերջին հարյուրամյակում նա համբերությամբ սպասել է այն օրվան, երբ կփոխվի Հայաստանը շրջապատող քաղաքակրթական միջավայրը ու պատմության գիրկը կանցնի իրեն արքանի մեջ վերցրած ռուս-թուրքական դաշինքը: Որովհետև մինչև 1917 թվականը հայոց արևմտյան և ռուսական կողմնորոշումները խորքում հիմնվել են նույն քաղաքակրթական ենթահողի վրա, ուստիև ռազմավարական հեռանկարի առումով չեն հակասել մեկը մյուսին: Երկու պարագայում էլ մեր նախնիները ոչ թե մեխանիկորեն կողմնորոշվել են դեպի Արևմուտք կամ Ռուսաստան, այլ փորձել են ստանալ, իրենց իսկ խոսքերով՝ **խաչապաշտ թագավորների** աջակցությունն ու հովանավորությունը:

Ուստի 2017 թվականի սկզբներից Հայաստանը շրջապատող քաղաքա-

կրթական միջավայրի փոփոխության մասին վկայող **նոր խաչակրության** ակտիվացումն Արևմուտքում նոր մարտահրավեր է դարձել ոչ միայն **նոր սելջուկների** (Թուրքիա և Ադրբեջան), այլև **նոր Բյուզանդիայի** (Ռուսաստան) համար, իսկ մեզ՝ հայերիս մոտ որոշակի հույսեր ու սպասումներ է արթնացրել:

Արևմտյան քաղաքակրթական տարածքի «ողողումը» իսլամական երկրներից ժամանող ներգաղթյալներով հանգեցրել է նրան, որ Եվրոպան հայտնվել է սեփական քրիստոնեական ինքնությունը պահպանելու հրամայականի առաջ: Ուստի եվրոպացիներն ավելի ու ավելի խորությամբ են ընկալում իսլամական ու թուրանական թափանցումների տեսքով հանդես եկող քաղաքակրթական մարտահրավերը: Անգամ ավանդաբար Ռուսաստանի հակառակորդը համարվող Լեհաստանում են այսօր հնչում ձայներ ժամանակին Եվրոպան թուրքական ներխուժումից փրկած **Յան III Սոբեսկի** արքայի փառավոր ավանդներին վերադառնալու մասին: Իսկ վերջինիս հուսարների<sup>2</sup> ու նրանց միացած լեհահայերի աջակցության շնորհիվ 1683-ին թուրքական ներխուժմանը դիմակայած Վիեննան, Բեռլինի հետ միասին սուր բանավեճի մեջ է մտել Թուրքիայի հետ: Դրան գումարվել են նաև Ռ. Էրդողանի «սուլթանական հանրաքվեի» քարոզարշավը Եվրոպա փոխադրելու փորձերը, որոնք վերջնականապես հունից հանել են եվրոպացիներին:

Նման պայմաններում աննկատ կերպով տեղի է ունենում 1917 թվականի հետևանքը հանդիսացող, բայց այսօր Եվրասիականության դոկտրինի միջոցով հիմնավորվող, ռուս-թուրքական գործակցության դաշտի դանդաղ, բայց հետևողական քայքայումը: Թուրքիայի ղեկավարությունն իսլամական աշխարհի լիդերը դառնալու ծրագրեր է մշակում, իսկ Եվրասիականության համադրույթի կենսագործման փորձերից ավելի ու ավելի հուսախաբվող Ռուսաստանը նորից հայացքն ուղղում է դեպի իր ավանդական ազդեցության գոտիներ: Ու մի պահ թվում է, թե այս գործընթացները մոտակա ժամանակներում խոստանում են մեր խնդիրները դարձնել քրիստոնյա Արևմուտքի ու Ռուսաստանի միասնական հոգածության առարկան: Բայց ողջ խնդիրն այն է, որ աստիճանաբար ժողովրդավարություն-ավտորիտարիզմ հակաթեզի տեղը զբաղեցնող **քաղաքակրթական ընտրության** բանաձևը շուտով կարող է դառնալ գերուժերի մարտավարական գործարքների գոհը:

Քաղաքակրթական խոր ճգնաժամի մեջ տարբերվող Ռուսաստանին անհրաժեշտ է գտնել ռուս-ամերիկյան համագործակցության նոր հարթակ, որի համար Արցախյան հիմնահարցի համատեղ լուծման ծրագիրն ամենահարմար փորձադաշտն է: Ուստի հենց նրա քողարկված աջակցությամբ Հայաստանում պարտվողականության մրցավազքի վերածված վերջին խորհրդարանական ընտրություններից հետո դիմադրողականության ռեսուրսից մասամբ զրկված մեր երկրի առջև դրվելու է (եթե արդեն չի դրվել) Արցախյան հիմնահարցի կարգավորման մի ծրագիր, որին քողարկված համաձայնություն է տալու նաև Թուրքիան:

Պատճառն այն է, որ տեսանելի ապագայում մեր տարածաշրջանի սահմաններին ուրվագծվող հիմնական ռազմավարական մարտահրավերը ոչ թե Ռուսաստանի նեոկայսերական ամբիցիաներն են, այլ քաղաքակրթական նոր սպառնալիքի վերածվող սուննի արմատականությունը: Առաջիկայում հետխորհրդային տարածքում ամերիկախորայելական ռազմավարներն «Իսլամական պետության» փոխարեն իրենց ռազմավարական գրավը կարող են տեղափոխել

2 Հեծելազորի տեսակ Լեհաստանում և այլ երկրներում:

մեծ թափով սուննիացող Ադրբեջանի միջոցով միասնականացման ձգտող Թուրքիայի, Ղազախստանի և այլոց հեռահար նկրտումների վրա: **Ուստի ներկա հանգրվանում Թուրքիայի ղեկավարությանը ձեռնտու է թուլացող Ռուսաստանի առաջնությունը Արցախյան հակամարտության կարգավորման գործում:**

Ավելի քան երկու տասնամյակ Հայաստանն ու Արցախը շրջափակած և Ադրբեջանի հարձակումների ու սեփական իշխանավորների կարճատեսության շնորհիվ նրան արյունաքամ արած Թուրքիան ձգտում է տարածաշրջանային կոնսենսուս ապահովել Արցախյան հիմնախնդրի «փոխզիջումային կարգավորման» շուրջ: Դրա հետևանքով նա կվերադառնա 2009-ի հայ-թուրքական արձանագրություններին, իսկ Ռուսաստանը կստանա տարածաշրջանի կոմունիկացիաները վերագործարկելու հնարավորություն՝ ստանձնելով հիմնականում, նախկին ԼՂԻՄ-ի սահմաններին բերված ու Հայաստանին միացված Արցախի անվտանգության երաշխավորի դերը: Սա հնարավորություն կտա հայ հասարակությանը համոզելու, թե իբր լուծվում է Արցախի հարցը, իսկ Ռուսաստանի մոտ էլ այն տպավորությունը կստեղծվի, թե ինքը վերջնականապես հաստատվում է Հարավային Կովկասում որպես հայերի անվտանգության երաշխավոր: Ադրբեջանն էլ երկարատև «չեմուչումից», իսկ հնարավոր է նաև ևս մեկ պարտությունից հետո կբավարարվի ազատագրված տարածքների վերադարձի հետևանքով կրճատված հայկական հողերը օղակելու գործառույթով:

Սա ներկայումս մեր տարածաշրջանում ուժերի նոր դասավորության ամենաձեռնտու տարբերակն է Թուրքիայի համար, որն արդեն սկսել է Հայաստանի ու Իրանի հետ իր սահմանների ականազերծման գործը: Որովհետև նրան այսօր անհրաժեշտ է Արցախյան հակամարտության շուտափույթ կարգավորման գործընթացում ապահովել անորոշության մեջ գտնվող Ռուսաստանի գերակայությունը՝ վերջինիս **բյուզանդական քաղաքականությունից** օգտվելու համար: Սուննի իսլամականության 5-րդ շարասյունների՝ Ղրիմի ու Կազանի թաթարական, բաշկիրական, հյուսիսկովկասյան և այլ գործոնների համատեղ ջանքերով առաջիկա տասնամյակներում ռուսական բանակը կանգնելու է իսլամացման փաստի առջև: Ժողովրդագրական խոցելիությունը նրան դարձնելու է 1071-ին Մանազկերտի ճակատամարտում պարտված բյուզանդական զորքի կրկնօրինակը: Ուստի ներկա պաշտպանական բնագծերից նահանջելու պարագայում հայկական ուժերին 1-2 տասնամյակ հետո հարկ է լինելու անցնել օղակաձև պաշտպանության՝ «արտաքին թուրքերի» և «ներքին թուրքերով» համալրված «նոր Բյուզանդիայի»՝ Հայաստանում տեղակայված զորքերի արանքում: Իսկ եթե դրան գումարենք նաև Ռուսաստանում մինչ այդ ուրվագծվող քաղաքական ցնցումների և անգամ հեղափոխության հեռանկարը, ապա պարզ կդառնա, թե ինչ կործանարար հետևանքներ են մեզ խոստանում Արցախի հարցը հայ-թուրքական արձանագրությունների «ռեանիմացիայի» խնդրի հետ միասին «մեկ փաթեթով» կարգավորվելու ծրագրերը:

Որովհետև ինչպես նշեցինք, մինչ Թուրքիայի կողմից Արցախի հարցում քարտ-բլանշ է տրվում Ռուսաստանին, ամերիկյան քաղաքականության վրա հզոր ազդեցություն ունեցող իսրայելական ռազմավարներն իրենց հերթին Ադրբեջանը փորձում են դարձնել թյուրքական միջուկ ունեցող ապագա սուննի-իսլամական կայսրության առաջնագիծը: Հենց դրա համար է ներկայումս Ադրբեջանում սկսվել շիաների գանգվածային սուննիացումը, իսկ Թուրքիային զուգահեռ նույն ռազմավարական խնդիրը լուծող Ղազախստանի նախագահն այցելել

է Բաքու՝ նրա կրտսեր գործընկերոջ հետ «անհրաժեշտ աշխատանքներ» տանելու համար:

Ռազմավարական առումով այս սպառնալիքները կարող են չեզոքացվել միայն այն դեպքում,

**Եթե** 2017 թվականի սկզբից Եվրոպայում արձանագրվող ավանդական-քրիստոնեական արժեքների վերածննդի բարեհույս քամիներն իրենց լուրջ ազդեցությունը գործեն դեռևս զարգացման երկու հավանական ուղիների ճամփաբաժանին կանգնած Ռուսաստանի վրա,

**Եթե** ներկայումս Եվրասիականության տեսքով հանդես եկող «Լենինի մոնդոլական դիմագծեր»<sup>3</sup>-ից ակնածելով՝ դեպի հետ, դեպի նոր 1917 թվական սահելու փոխարեն Ռուսաստանը վերադառնա արևելքի քրիստոնյաների պաշտպանի իր առաքելության իրականացմանը՝ դառնալով նոր խաչակիրների միասնական ճամբարի առաջնագիծը,

եվ **Եթե** մինչ այդ մեզ հաջողվի դիմանալ ու մաքառել այն լուսավոր **տեսիլքը** դիմավորելու համար, որում մեկ հազարամյակը գերազանցող հեռավորությունից գուշակված է արևելքից եկած «նետողաց ազգի» կործանումն ու Հայաստանի վերածնունդը՝ որպես համաքրիստոնեական դրախտավայր:

Չմոռանանք, որ 5-րդ դարի կաթողիկոս **Ներսես Մեծին** վերագրվող<sup>4</sup>, բայց իրականում Կիլիկյան Հայաստանի քաղաքական սպասումներն արտացոլող տեսիլքի միջոցով հայկական մեսիանիզմը Հայաստանի փրկության ու վերածննդի հեռանկարները կապել է ժամանակին Եվրոպայի ողջ արևմուտքը միավորած Ֆրանկների կայսրության՝ **«ազգն հռովմայեցոց, որ անուանին փռանկը»**<sup>5</sup> աջակցության հետ: Իսկ հետագայում այն լրացրած, բայց ոչ շրջափոխած ռուսական կողմնորոշման ուղեգիծը ընդհուպ մինչև չարաբաստիկ 1917 թվականը իր հիմքում նույնպես քաղաքակրթական բովանդակություն է ունեցել որպես «Մոսկովյան օգոստոսափառ տնից» սերող մի տիրակալի առաքելություն, որը «պիտի իր ձեռքը վերցնի Հայաստանի թագավորությունը և վերականգնի քրիստոնյաների ազատությունը»<sup>6</sup>:

Ուրեմն քանի դեռ Արևմուտքը մեր տարածաշրջանում անհրաժեշտ չափով չի ակտիվացել որպես նոր խաչակրություն, իսկ Ռուսաստանը չի կատարել իր քաղաքակրթական ընտրությունը, չի վերադարձել իր իրական արմատներին, չի դարձել քրիստոնեական մեծ քաղաքակրթության մի մասը, **ճակատագրական սխալ** կարող է լինել Արցախի հարցում որևէ «փոխզիջումային» տարբերակի որդեգրումը: Մենք հավատում ենք, որ պատմության երկաթյա տրամաբանությամբ՝ Ռուսաստանն ի վերջո կվերադառնա իր արմատներին, և ռուս մեծ ժողովրդին կհաջողվի հետ մղել ներկայումս իր երկրին նորից սպառնացող 1917 թվականի ուրվականը: Բայց դրա համար Ռուսաստանում անխուսափելի կլինեն նաև նոր ցնցումներն ու հեղաբեկումները: Նման պայմաններում չի բացառվում անգամ 1918-ի նման տարածաշրջանում մեր մենակ մնալու սցենարի կրկնությունը, որին պատրաստ չլինելու պարագայում Արևմտյան Հայաստանի նման այս անգամ էլ Արցախը կարող ենք զոհաբերել Ռուսական հեղափոխության

3 **Բերդյակ Նիկոլայ**, Եվրասիականները, «ՎԷՄ», 2016, N 3 էջ 217:

4 Հետազոտողների կարծիքով՝ թեև այս միջնադարյան տեսիլքը վերագրվում է Ներսես Գարթեթին կամ Ներսես Մեծին, բայց իրականում այն խաչակրաց արշավանքների դարաշրջանի մտայնության արտահայտություն է: Ավելի մանրամասն տե՛ս **Աշոտ Գ. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, եր., «Հայկական ՄՍՌ ԳԿ հրատ.», 1957:

5 Տե՛ս Սոփերը հայկականը, Զ, էջ 90 և հետ.:

6 ՄԵՋՐԵՐՈՒՄ ԸՍՏ՝ **Աշոտ Գ. Հովհաննիսյան**, նշված աշխատությունը, էջ 13:

հերթական հանգրվանին:

Իսկ եթե մեզ հաջողվի դիմանալ առաջիկայում մեզ սպասող «խաղաղության գայթակղությանը», ապա Արևմուտքում ամրապնդվող նոր խաչակրության առաջխաղացումից ու Ռուսաստանի քաղաքակրթական ընտրության հստակեցումից հետո, Արցախի հարցն ընդամենը մի փոքրիկ թղթի կտոր կդառնա հայ ժողովրդի հանդեպ երիտթուրքերի, քեմալականների ու բոլշևիկների կատարած հանցագործությունների մեծ թղթածրարում, որի հայանպաստ վճռահատումը այլևս ոչ մեկի մոտ կասկած անգամ չի հարուցի: Ուրեմն մեր տարածաշրջանում խաղաղության ու բարիդրացիության հաստատման համար անհրաժեշտ պայմանները դեռևս չեն հասունացել և գերուժերի ներկա «Արցախյան գորաշարժը» ոչ թե ընդհանուր-արժեքային ընտրության դաշտում է, այլ Մերձավոր-Միջին Արևելքում սկիզբ առած՝ մարտավարական առևտրի տիրույթում:

Ու քանի որ Հայաստանում ավարտված խորհրդարանական ընտրապայքարի ժամանակ նրանց հաջողվել է Արցախի հարցն աննկատ կերպով ներքերել երկրի ներքաղաքական օրակարգ՝ չարժանանալով իշխանությունների համամաստ հակազդեցությանը, ապա առաջիկա ամիսներին մենք պետք է պատրաստ լինենք նաև նրա լուծման պատրանք ստեղծող որոշակի ծրագրի առաջադրմանը՝ մեր փոխարեն «ընդունված» որոշման տեսքով:

Այս անգամ, այն էլ Արցախի հարցում, սխալվելու իրավունք չունենք, որովհետև Հայաստանը շրջապատող քաղաքակրթական միջավայրի փոփոխությանը բնորոշ հիմնական՝ առանցքային միտումը մեր օգտին է: Պարզապես վերջինիս հասունացման համար դեռևս ժամանակ է հարկավոր, մինչև որ մեր տարածաշրջանում գերտերությունների ունեցած աշխարհաքաղաքական նախապատվությունները կվերադասավորվեն նրանց ընդհանուր արժեքային ընտրության հարթության վրա:

*Խմբ.:*

## THE GHOST OF 1917

**Key words** – ghost, vision, watershed, Byzantine politics, Nerses I Great, Armenian messianism, Christian kings, new crusaders, Russia, revolution, Artsakh issue.

## ПРИЗРАК 1917-ГО ГОДА

**Ключевые слова** – призрак, видение, водораздел, византийская политика, Нерсес Великий, армянский мессианизм, христианские короли, новые крестоносцы, Россия, революция, Арцахский вопрос.